ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Պ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՄԿԿ XXV համագումարն առաջադրեց կոմունիզմի կառուցման նոր վիթխարի խնդիրներ, որոնց լուծման գործում էլ ավելի է մեծանում Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար դերը։ Կոմունիստական հասարակարգի կառուցման ընթացքում ՍՄԿԿ ղեկավար դերի բարձրացումը օրինաչափ պրոցես է՝ պայմանավորված հասարակության զարգացման մեջ օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների փոխադարձ կապով և ներգործությամբ։ Կուսակցության համար այդ դերն անցողիկ չէ, այն օրինաչափ է և գործում է նրա պայքարի բոլոր էտապներում։ Վ. Ի. Լենինը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի վճռական պայմանը համարում էր ինքնուրույն բանվորական կուսակցության կազմակերպումը, առանց որի հնարավոր չէր «շուռ տալ Ռուսաստանը»։ «Առանց այդպիսի կազմակերպության,— նշել է Վ. Ի. Լենինը,— պրոլետարիատն ընդունակ չէ բարձրանալու մինչև գիտակցական դասակարգային կռվի աստիճանը, առանց այդպիսի կազմակերպության բանվորական շարժումը դատապարտված է անզորության»[1]։

Հասարակությունն ունի իր զարգացման օբյեկտիվ օրենքները, որոնք չեն դրսևորվում այլ կերպ, քան մարդկանց պրակտիկ գործունեության միջոցով։ Իսկ մարդկանց պրակտիկ գործունեությունը, ավելի կոնկրետ՝ պրոլետարիատի դասակարգային կռիվը միշտ էլ ղեկավարման կարիք ունի, այլապես պրոլետարիատի դասակարգային պայքարը տարերայնության շրջանակներից դուրս գալ չի կարող։ Եվ հենց այս հանգամանքից ելնելով, կուսակցության ղեկավար դերը դառնում է բանվոր դասակարգի համաշխարհային պատմական միսիայի կատարման կարևորագույն գործոնը։ Բանվորական շարժման և կուսակցության ղեկավար դերի արդյունավետության գլխավոր նախապայմանը փոխադարձ կապի և փոխներգործության մեջ է։ Վ. Ի. Լենինը առաջին ռուսական հեղափոխության թեժ օրերին ուսուցանում էր, որ հեղափոխությունը, անտարակույս, դաս կտա, կսովորեցնի կուսակցությանը, «բայց պայքարող քաղաքական կուսակցության համար հարցի էությունը հիմա այն է, թե կկարողանա՞նք մենք արդյոք հեղափոխությանը որևէ բան սովորեցնել, կկարողանա՞նք մենք արդյոք օգտվել մեր սոցիալ-դեմոկրատական ուսմունքի ճշտությունից»[2]։

Մինչև սոցիալիստական հեղափոխությունը կուսակցությունը ղեկավարի ու առաջնորդի իր դերը ուղղում է այն բանին, որպեսզի պրոլետարիատը ձեռք բերի քաղաքական իշխանություն։ Իշխանությունը նվաճելուց հետո կու-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 475։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 4։

սակցության ղեկավար դերի շրջանակներն ընդլայնվում են։ Այդ ղեկավարության շրջանակները համապատասխանաբար ընդլայնվում են այն չափով, որքանով որ ընդլայնվում են սոցիալիզմի կառուցման շրջանակները։ Սոցիալիզմի կառուցումը օրինաչափ ու վերընթաց պրոցես է, որի ընթացքում օրինաչափորեն աճում ու վերընթաց է ապրում նաև կուսակցության ղեկավար դերը։

Հասարակության ղեկավարման գործում կուսակցությունը իր ողջ գործունեությունը խարսխում է մարքս-լենինյան տեսության հետևյալ սկզբունքների վրա՝ մշակել գիտականորեն հիմնավորված քաղաքականություն, դասակարգային մոտեցում ունենալ հասարակության մեջ կատարվող երևույթների նկատմամբ, տեսությունը ստուգել պրակտիկայում, ղեկավարման գործում խստորեն պահպանել ներկուսակցական դեմոկրատիան, չշեղվել ղեկավարման դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքներից. ունենալ նորի զգացողություն, կատարել պատմական փորձի գիտական ընդհանրացում և այս երկուսի հենքի վրա կարողանալ կանխատեսել գալիքը, դարձնել որոշակի պրոլետարիատի (այժմ համաժողովրդական) դիկտատուրայի սիստեմում կուսակցության, պետության և հասարակական կազմակերպությունների ֆունկցիաները, հստակորեն սահմանազատելով, բայց չանջատելով դրանք միմյանցից։ Եվ, այնուհետև, որ ոչ պակաս կարևոր է՝ վարել ճիշտ կադրային քաղաքականություն։

Ինչպես նշվեց վերևում, կուսակցության ղեկավար դերի արդյունավետության կարևորագույն նախապայմանը գիտականորեն հիմնավորված քաղաքականությունն է, ստրատեգիական կուրսը։ Միջազգային կոմունիստական շարժման պրակտիկան ընդհանրապես և ՍՄԿԿ պատմական փորձը մասնավորապես, այդ են հավաստում։

ՍՄԿԿ XXV համագումարում ի մի բերելով կուսակցության վարած քաղաքականության արդյունքները թե՛ ներքին և թե՛ արտաքին հարաբերությունների բնագավառներում, Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Բառացիորեն մեր աչքի առաջ աշխարհը փոխվում ու փոխվում է դեպի լավը։ Մեր ժողովուրդը, մեր կուսակցությունը այդ փոփոխությունների պասսիվ հայեցողները չեն։ Ոչ, մենք դրանց ակտիվ մասնակիցներն ենք։

Կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի աշխատանքը, միջազգային ասպարեզում ՍՄԿԿ-ի և սովետական պետության գործունեությունը՝ այս ամենը արժանի ավանդ են հասարակական առաջադիմության գործում։ ...Միթե կարելի է խորին գոհունակություն չզգալ մեր գաղափարների ուժից, մեր քաղաքականության ներգործությունից, մեր ժողովրդի ստեղծարար եռանդից... Այսօր, գիտենալով, ... ինչպիսի արդյունքներ ձեռք բերվեցին, մենք կարող ենք վստահությամբ ասել՝ ճիշտ կուրս էր մշակվել»[3] ՍՄԿԿ XXIV համագումարում։

Կյանքը ցույց տվեց, որ միջպետական հարաբերություններում խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը ոչ թե բարի ցանկություն էր, այլ միանգամայն ռեալ խնդիր, որ այսօր աշխարհի քաղաքական տարբեր կարգ ունեցող շատ ու շատ պետություններ միջազգային քաղաքականության բնագավառում կանգնած են խաղաղ գոյակցության դիրքերում։ Այդ է վկայում անցյալ տարի Հելսինկիում կայացած համաեվրոպական պետությունների միջազգային

3 «Սովետական Հայաստան», 25. II. 1976։

խորհրդակցությունը, որի եզրափակիչ ակտի տակ ստորագրեցին Եվրոպայի 33 պետությունների, ԱՄՆ-ի և Կանադայի ղեկավարները։ Մշակվեց միջպետական փոխհարաբերությունների սկզբունքների հավաքածու, որը «թե տառով, թե ոգով համապատասխանում է խաղաղ գոյակցության պահանջներին»[4]։ Կար ժամանակ, որ Սովետական Միության հետ կապիտալի աշխարհը խոսում էր ուժի դիրքերից, «սառը պատերազմի» լեզվով ու տրամաբանությամբ։ Այժմ բոլորին հայտնի է, նշել է Լ. Ի. Բրեժնևը, որ «դա այն լեզուն չէ, որով կարելի է խոսել Սովետական Միության հետ»[5]։ Սովետական Միության արտաքին քաղաքական կուրսը, որ խարսխված է խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքների վրա, հաղթանակներ է բերել։ Այդ կուրսը հաղթանակող է, որովհետև ճշմարիտ է։ Այդ կուրսը ճշմարիտ է, որովհետև «սոցիալիզմը և խաղաղությունը անբաժանելի են»[6]։

ՍՄԿԿ XXV համագումարը խաղաղության և միջազգային համագործակցության, ժողովուրդների ազատության և անկախության համար հետագա պայքարի ծրագիր ընդունեց, որը կուսակցության նախորդ համագումարի կողմից ընդունված խաղաղության ծրագրի օրգանական շարունակությունն է։

Կուսակցական ղեկավարությունը, նախ և առաջ, քաղաքական ղեկավարություն է։ Արտաքին հարաբերությունների բնագավառում ՍՄԿԿ վարած կուրսը քաղաքական կուրս է։ Արդի դարաշրջանում, երբ լարվածությունը միջպետական հարաբերություններում զգալիորեն թուլացել է, երբ «սառը պատերազմի» քաղաքականությունը տեղի է տվել խաղաղության քաղաքականությանը, հաճախ հարց է ծագում, թե լարվածության թուլացումը ինչպե՞ս է ազդում դասակարգային պայքարի վրա։ Բանվորական շարժման ներսում հաճախ լսվում են «ձախ» բնույթի այնպիսի պնդումներ, որ իբր խաղաղ գոյակցությունը մթագնում ու թուլացնում է դասակարգային պայքարը, որ իբր լարվածության թուլացումը նպաստում է «սոցիալ-քաղաքական ստատուս-քվոյի» սառեցմանը, կապիտալիզմի կայունացմանը։ Կարճ ասած «ձախերը» փորձում են Սովետական Միության կոմունիստական կուսակցությանը մեղադրել արտաքին քաղաքականության բնագավառում դասակարգային մոտեցումից շեղվելու մեջ։ Պատասխանելով «ձախերին», Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում նշեց. «ամեն մի հեղափոխություն նախ և առաջ տվյալ հասարակության ներքին զարգացման օրինաչափ արդյունքն է։ Կյանքն ինքն էլ է հերքում «սառեցման» վերաբերյալ հորինվածքները։ Բավական է հիշել այն մեծ հեղափոխական փոփոխությունները, որ աշխարհում կատարվել են վերջին տարիներս»[7]։ Այդ քաղաքականության դեմ հարձակումներ են լինում նաև աջից։ Բուրժուական շատ գործիչներ կշտամբում են ՍՍՀՄ-ին, մեր կուսակցությանը այն բանի համար, որ օգնելով ազատագրության ուղին բռնած շատ ու շատ ժողովուրդների, մենք իբր շեղվում ենք խաղաղ գոյակցության սկզբունքներից։ Ինչպես «ձախերը», այնպես էլ աջերը անտեսում են խաղաղ գոյակցության քաղաքականության դասակարգային էությունը, միայն այն տարբերությամբ, որ մեկը այն անտեսում է աջից, իսկ մյուսը՝ «ձախից»։

---

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

Պատասխանելով աջերին Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ խաղաղ գոյակցությունը, լարվածության թուլացումը վերաբերում են միջպետական հարաբերություններին։ Դա այնպիսի քաղաքականություն է, որի օգնությամբ միջպետական վեճերը լուծվում են խաղաղ միջոցներով, բայց ոչ թե պատերազմի, ուժ գործադրելու կամ ուժով սպառնալու միջոցով։ «Լարվածության թուլացումը ամենևին չի վերացնում ու չի կարող վերացնել կամ փոխել դասակարգային պայքարի օրենքները։ Ոչ ոք չի կարող հույս տածել, թե լարվածության թուլացման պայմաններում կոմունիստները կհաշտվեն կապիտալիստական շահագործման հետ կամ մոնոպոլիստները կդառնան հեղափոխության կողմնակիցներ։... Մենք... լարվածության թուլացման մեջ տեսնում ենք սոցիալիստական և կոմունիստական խաղաղ շինարարության է՛լ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղի»[8]։

Այսպիսով, ինչպես արտաքին հարաբերությունների բնագավառում, այնպես էլ կոմունիստական շինարարության գործում Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար դերի արդյունավետությունը պայմանավորված է եղել նախ և առաջ նրանով, որ նրա ընտրած քաղաքական կուրսը՝ ստրատեգիան ու տակտիկան, ճշմարիտ է, գիտականորեն հիմնավորված, որ ամբողջ սովետական ժողովուրդը պաշտպանել է կուսակցության քաղաքական գիծը։ «Սա է,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— մեր քաղաքականության հաջողության գլխավոր երաշխիքը։ Այդ քաղաքականությունը ծառայում է բոլոր ժողովուրդների արմատական շահերին։ Այդ քաղաքականությանն է պատկանում ապագան»[9]։

Ինչպես հայտնի է, ՍՄԿԿ XXIV համագումարը սկզբունքային դրույթներ էր առաջադրել զարգացած սոցիալիստական հասարակարգում կուսակցության տնտեսական քաղաքականության արմատական հարցերի վերաբերյալ։ ՍՄԿԿ XXV համագումարը ելնելով այդ դրույթներից, տվեց կուսակցության ստրատեգիական պլանը տնտեսական շինարարության բնագավառում։ Վ. Ի. Լենինը նշել է, որ կուսակցության տնտեսական քաղաքականության տևական կողմնորոշման մեջ ենք մենք տեսնում «մեր աշխատանքի, մեր քաղաքականության, մեր տակտիկայի, մեր ստրատեգիայի ընդհանուր պլանը»[10]։ Կուսակցության ստրատեգիական պլանը հետամտել և հետամտում է տևական ու հիմնական մի նպատակ՝ ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը։ «Կուսակցության տնտեսական ստրատեգիայի առանցքը,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— որի վրա են խարսխվում թե՛ տասներորդ հնգամյակը և թե՛ տևական հեռանկարը, երկրի տնտեսական հզորության հետագա մեծացումն է, արտադրական ֆոնդերի ընդլայնումը ու արմատական նորացումը, էկոնոմիկայի հիմքի՝ ծանր արդյունաբերության կայուն հաշվեկշռված աճի ապահովումը»[11]։

Զարգացած սոցիալիստական հասարակարգում արտադրությունը և նրա հետ օրգանապես միահյուսվող գիտությունը ավելի ու ավելի բազմաճյուղ են դառնում, միաժամանակ արտադրությունը ավելի ու ավելի կոմպլեքսային բնույթ է ստանում։ Նման պայմաններում բազմաճյուղ է դառնում ու կոմպլ-

8 Նույն տեղում։
9 Նույն տեղում։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 598։
11 «Սովետական Հայաստան», 25. II. 1976։

լեքսային բնույթ է ստանում նաև կուսակցական ղեկավարությունը։ Ահա թե ինչու, առավել քան երբեք, կուսակցական աշխատանքները վերից վար ավելի ու ավելի են դրվում գիտական հիմքերի վրա։

Հասարակական կյանքում կուսակցության ղեկավար դերը կարելի է ապահովել միայն կուսակցական կյանքի լենինյան նորմերի կիրառման հիման վրա։ Այդ նորմերից դուրս կուսակցության ղեկավար դերի մասին խոսք լինել չի կարող։ ՍՄԿԿ XX համագումարի կողմից կուսակցական կյանքի լենինյան նորմերի վերականգնման ու դրանց պաշտպանության համար առաջադրված խնդիրը հնացած չէ, որովհետև «Ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական զարգացումը, կուսակցության յուրաքանչյուր անդամի նկատմամբ պահանջկոտության բարձրացումը՝ լենինյան այս սկզբունքները անցած փուլ չեն։ Դրանք կուսակցության զարգացման հիմքն են նաև մեր օրերին»[12]։

Կուսակցության մարտունակության կարևորագույն նախապայմանը նրա որակական կազմի մեջ է։ Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ նշվում է, որ անցած 5 տարիների ընթացքում կուսակցության շարքերը աճել են 2,6 միլիոն մարդով։ Այժմ կուսակցության մեջ կա 15 միլիոն 694 հազար կոմունիստ։ Ինչ խոսք, կուսակցության շարքերի աճը օբյեկտիվ երևույթ է և բխում է հասարակության մեջ կուսակցության ղեկավար դերի ու նրա հեղինակության բարձրացման ամբողջ ընթացքից, «սակայն,— ինչպես նշում է Լ. Ի. Բրեժնևը,— ՍՄԿԿ-ն չի արագացնում իր թվական աճը։ Նա իր շարքերն է ընդունում միայն նրանց, ովքեր գործով ապացուցել են, որ կուսակցության մեջ են մտնում, լենինյան բառերով ասած, ոչ թե որևէ շահ ստանալու համար, այլ հանուն անձնվեր աշխատանքի, հօգուտ կոմունիզմի»[13]։

Այնուհետև, կուսակցական կյանքի լենինյան նորմերի անշեղ կենսագործումը, կուսակցության քանակական աճը պետք է նպաստեն նրա որակական կազմի բարելավմանը։ Այսօր, երբ մեր կուսակցությունը դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցություն, դա չի նշանակում, թե նա փոխել է իր դասակարգային բնույթը. «Իր էությամբ ՍՄԿԿ-ն եղել է և մնում է բանվոր դասակարգի կուսակցությունը»[14]։ Եվ պատահական չէ, որ մեր բազմամիլիոն կուսակցության կազմի 41,6%-ը բանվորներ են։

«Կուսակցությունն ամրանում է նրանով, որ զտում է իրեն»[15]։ Կուսակցական փաստաթղթերի փոխանակությունը թեև կուսակցական շարքերի զտում չէր, բայց մի այնպիսի միջոցառում էր, որով բարձրացավ կոմունիստների պատասխանատվությունը հանձնարարված գործի և պահանջկոտությունը կանոնադրությունը խախտողների նկատմամբ։ Կուսակցական փաստաթղթերի փոխանակման ընթացքում 347 հազար մարդ նոր տոմս չստացավ։ Կուսակցությունը իր շարքերը մաքրեց այն անձնավորություններից, ովքեր շեղվել էին կուսակցական կյանքի նորմերից, թույլ էին տվել կանոնադրական խախտումներ, կորցրել կապը կուսակցական կազմակերպությունների հետ։

«Որքան պակաս լինեն կուսակցության ներսում երերությունն ու անկայունությունը,— նշել է Վ. Ի. Լենինը,— այնքան ավելի լայն, ավելի բազմա-

---

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 457։

կողմանի, ավելի հարուստ և ավելի արդյունավետ կլինի կուսակցության ազդեցությունը նրան շրջապատող, նրա ղեկավարած... մասսաների... վրա»[16]։ Եվ այնուհետև՝ առանց մասսաների հետ կապն ամրապնդելու, առանց նրանց աջակցության կուսակցությունը չի կարող զարգանալ և կդառնա աղանդ։ Այստեղից հետևում է, որ կուսակցությունը կարող է իր ղեկավար դերը հասարակության մեջ իրականացնել միայն ու միայն ժողովրդի ու կուսակցության փոխադարձ կապի պայմաններում։ Կուսակցական կյանքի լենինյան այս նորմից դուրս կուսակցության ղեկավար դերի մասին խոսք լինել չի կարող։ Այս պատճառով էլ ՍՄԿԿ XXV համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ մեծ տեղ է հատկացված այդ խնդրի լուսաբանմանը։ Ինչպես հայտնի է, կուսակցության կազմակերպական ղեկավար սկզբունքը՝ դեմոկրատական ցենտրալիզմը, քննարկման ու քննադատության ազատության և գործողության միասնության օրգանական ամբողջականությունն է։ Մի կողմից ներկուսակցական դեմոկրատիայի համակողմանի ընդլայնումը, մյուս կողմից՝ վերադաս օրգանների ընդունած որոշումների կենսագործման համար պահանջկոտության բարձրացումը, ավելի ամրակուռ են դարձնում կուսակցական կարգապահությունը։ Ներկուսակցական դեմոկրատիայի համակողմանի ընդլայնումը կուսակցական կյանքի օրենքն է։

Ներկուսակցական դեմոկրատիայի ընդլայնման մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ անցած հաշվետու-ընտրական կամպանիայի ժամանակ կուսակցական ժողովներին մասնակցել է կոմունիստների կազմի 94%-ը, իսկ մտքերի փոխանակությանը՝ ներկա գտնվողների յուրաքանչյուր չորրորդը։ Հաշվետու-ընտրական կամպանիայի ընթացքը լուսաբանվում էր մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ։ Դրանով իսկ, փաստորեն, կուսակցական կոմիտեների հաշվետվությունները, ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, վերածվեցին հաշվետվությունների աշխատավորների առջև. «Դա խոր իմաստ է բովանդակում։ Կուսակցությունը գաղտնիքներ չունի ժողովրդից. նա կենսականորեն շահագրգռված է, որ բոլոր սովետական մարդիկ իմանան իր գործերի ու պլանների մասին, ունենան իրենց կարծիքը դրանց վերաբերյալ»[17]։ Կուսակցության և ժողովրդի կապի վառ օրինակ էր «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» նախագծի համաժողովրդական քննարկումը, որին մասնակցեց 7,6 միլիոն մարդ, եղան մեկ միլիոնից ավելի առաջարկություններ և ցանկություններ։ Ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որը քննության կառնի աշխատավորության արած առաջարկություններն ու ցանկությունները և դրանք, անտարակույս, հաշվի կառնվեն հնգամյա պլանի կազմման ժամանակ։ Այս փաստով վերստին ցուցադրվեց աշխատավորների կենսական շահագրգռվածությունը կուսակցության առաջադրած խնդիրների լուծման նկատմամբ։ ՍՄԿԿ XXV համագումարը ըստ էության դռնբաց համագումար էր։ Նրա աշխատանքներին հաղորդակից էր նաև սովետական ողջ ժողովուրդը։ Սովետական յուրաքանչյուր քաղաքացի ուշի-ուշով հետևում էր համագումարի աշխատանքներին, նա այդ աշխատանքների պասսիվ հայեցողը չէր, այլ, ըստ էության՝ ակտիվ մասնակիցը։ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն իր հեր-

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 325։

17 «Սովետական Հայաստան», 25. II. 1975։

թական համագումարում հաշվետվություն էր տալիս ամբողջ ժողովրդին՝ իր արած գործերի ու անելիքների մասին։ Յուրաքանչյուր քաղաքացի կուսակցության առաջադրած խնդիրների մեջ տեսնում ու առանձնացնում էր իրենը, գիտակցում իր անելիքները, իր հնգամյա խնդիրները ու տոգորվում դրանք գործի վերածելու անշեղ ձգտումով։

«Կուսակցության ղեկավար, մոբիլիզացնող դերը,— նշել է Լ. Ի. Բրեժնևը, —վերացական հասկացություն չէ։ Դա ինքը կյանքն է, մեր ամբողջ առօրյա պրակտիկան»[18]։ Հաշվետու ժամանակաշրջանում լրիվ ծանրաբեռնվածությամբ են աշխատել ՍՄԿԿ Կենտկոմը, քաղբյուրոն ու քարտուղարությունը։ Գումարվել են Կենտկոմի տասնմեկ պլենումներ, քաղբյուրոյի 215 և քարտուղարության 205 նիստեր, որոնցում քննարկվել և լուծվել են կուսակցության, մեր երկրի կյանքի կարևորագույն հարցերը։ Ընդունված որոշումներում բևեռացվել է կուսակցության կոլեկտիվ կամքը և աշխատավորության խտացված փորձը։ Այս ոգով ընդունված որոշումները կենսունակ են, որովհետև դրանց իրականացման համար գործի են լծվում կուսակցությունը, ողջ ժողովուրդը։

Կուսակցության ղեկավար դերի իրականացման կարևոր պայմանը աշխատանքային լենինյան ոճն է, «իսկ լենինյան ոճը,— ինչպես մատնանշել է Լ. Ի. Բրեժնևը,— ստեղծագործական ոճ է, որին խորթ է սուբյեկտիվիզմը, նրան բնորոշ է գիտական մոտեցումը բոլոր հասարակական պրոցեսների նկատմամբ։ Նա ենթադրում է բարձր պահանջկոտություն իր և ուրիշների նկատմամբ, բացառում է ինքնագոհությունը, հակադրվում է բյուրոկրատիզմի ու ձևամոլության ամեն տեսակ դրսևորումներին»[19]։

Կուսակցական ղեկավարության և աշխատանքի լենինյան ոճը կոփվում է քննադատության և ինքնաքննադատության բովում։ Քննադատության և ինքնաքննադատության մեթոդի բուն էությունն այն է, նշված է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ, որ այս կամ այն կազմակերպության, այս կամ այն աշխատողի գործունեության բոլոր կողմերը ստանան օբյեկտիվ գնահատական, թույլ չտրվի լիբերալ վերաբերմունք թերությունների և դրանց համար մեղավորների նկատմամբ։ Մարդկանց նկատմամբ հարգանքն ու վստահությունը պետք է զուգորդվեն հանձնարարված գործի համար բարձր պահանջկոտության հետ։ Քննադատությունն ու ինքնաքննադատությունը կուսակցական կյանքի հիմնական օրենքն է, կուսակցության ղեկավար դերը կյանքի կոչելու կարևորագույն նախապայմանը։ Այդ օրենքի դեմ ամեն մի սխալ վերաբերմունք, քննադատության ճնշման ամեն մի փաստ պետք է սուր և օպերատիվ արձագանք գտնի կուսակցական մարմինների կողմից։ Համագումարում նշվեց, որ «քննադատության արժեքավորությունը նրա ճշմարտացիությունն է, բարձրացվող հարցերի հասարակական նշանակալիությունը։ Իր հերթին ինքնաքննադատության արժեքավորությունը որոշվում է նրա անկեղծությամբ, սխալների ու թերությունների շտկմանը անհապաղ ձեռնամուխ լինելու պատրաստակամությամբ»[20]։ Քննադատության և ինքնաքննադատության էության այս համակողմանի վերլուծությունը գործնական մեծ արժեք ունի։ Գաղտնիք չէ, որ առանձին կազմակերպություններում կուսակցական ժողով-

18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։

ները երբեմն ձևական բնույթ են կրում հենց այն պատճառով, որ նրանցում տեղ չեն գտնում իսկական քննադատությունն ու ինքնաքննադատությունը։ Այդպիսի ժողովներում քննադատությունը շատ ընդհանուր է, վերացական և անհասցե, իսկ ինքնաքննադատության մասին՝ խոսք լինել չի կարող. աշխատանքների վերլուծությունը՝ մակերեսային է, տրված գնահատականը՝ ոչ օբյեկտիվ, ընդունված որոշումը՝ ձևական։ Նման ժողովները գործին օգնելու փոխարեն վնաս են պատճառում, հարվածում կուսակցական կազմակերպության հեղինակությանը, գցում նրա՝ որպես ղեկավարի ու կազմակերպչի գերը տվյալ կազմակերպությունում։

Այն հզոր լծակը, նշված է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ, որով կուսակցությունը ներգործում է հասարակական զարգացման ընթացքի վրա, նրա կադրային քաղաքականությունն է։ Այս հարցում ևս ՍՄԿԿ XXV համագումարը գործնական խնդիրներ է դնում։ Վ. Ի. Լենինը նշել է, որ մեզ համար «սոցիալ-դեմոկրատի իդեալը պետք է լինի ոչ թե տրեդյունիոնի քարտուղարը, այլ ժողովրդական տրիբունը»[21], որ կադրերին պետք է ընտրել և առաջ քաշել, հաշվի առնելով նրանց գործնական ու քաղաքական հատկանիշները։ Լենինյան այս ցուցումներից ելնելով, ՍՄԿԿ XXV համագումարը տվեց ժամանակակից ղեկավարի բնութագիրը. «ժամանակակից ղեկավարը,— նշում է Լ. Ի. Բրեժնևը, —պետք է իր մեջ կուսակցականությունը օրգանապես զուգորդի խոր բանիմացության հետ, կարգապահությունը՝ նախաձեռնության հետ և գործի նկատմամբ ստեղծագործական մոտեցման հետ։ Միաժամանակ, ղեկավարը պարտավոր է ցանկացած տեղամասում հաշվի առնել նաև սոցիալ-քաղաքական, դաստիարակչական կողմերը, զգայուն լինի մարդկանց նկատմամբ, նրանց կարիքների ու պահանջմունքների նկատմամբ, օրինակ ծառայի աշխատանքում և կենցաղում»[22]։ Կադրերի ճիշտ ընտրությունը, նրանց պատրաստումը և վերապատրաստումը կուսակցության կադրային քաղաքականության բաղկացուցիչ մասերն են։ Կադրերի պատրաստումը կարելի է նույնացնել դաստիարակության հետ, բայց չի կարելի վերապատրաստման տակ հասկանալ գործը ձախողող, պատասխանատվության զգացումը կորցրած, դիտելիքների թույլ պաշար ունեցող կադրերի վերադաստիարակում։ Հաշվետու զեկուցման մեջ նշվում է, որ պետք է շարունակել պայքարը կադրերի չարդարացված տեղափոխումների և հոսունության դեմ, սակայն դա չի նշանակում «թե կադրերն ամրապնդելու պատրվակով կարելի է ղեկավար պոստերում թողնել նրանց, ում ուժը, ինչպես ասում են, չի պատում, ովքեր գլուխ չեն բերում իրենց պարտականությունները։ Առավել ևս չի կարելի ղեկավար աշխատանքում թողնել այնպիսի մարդկանց, ովքեր հանդես են բերում անպատասխանատվություն, ապրում են գիտելիքների հին պաշարով, կարծելով, թե պաշտոնը ինքնըստինքյան իրենց համար ապահովում է հեղինակություն և հարգանք»[23]։ Առավել ևս չի կարելի կադրերի վերադաստիարակության միտումով ղեկավար պաշտոնում թողնել այն մարդկանց, ովքեր կորցրել են իրենց գործունեությունը քննադատաբար գնահատելու ընդունակությունը, կտրվել

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 561։
22 «Սովետական Հայաստան», 25. II. 1976։
23 Նույն տեղում։

են կյանքից, բազմացնում են շողոքորթներ ու քծնողներ, ովքեր կորցրել են կոմունիստների վստահությունը։

Կուսակցությունը իր ղեկավար դերը հասարակության մեջ իրականացնում է սովետների, արհմիությունների, կոմերիտմիության և այլ հասարակական ու պետական կազմակերպությունների միջոցով։ Այդ կազմակերպությունները, ինչպես մատնանշել է Վ. Ի. Լենինը, կուսակցության այն շարժիչներն են, որոնց միջոցով նա կապվում է մասսաների հետ, գործի է վերածում իր կոմունիստական իդեալները։ Ելնելով կոմունիստական հասարակարգի կառուցման օրինաչափություններից ՍՄԿԿ XXV համագումարը պետական ու հասարակական կազմակերպությունների առաջ նոր խնդիրներ դրեց, խնդիրներ, որոնց իրականացման գործում ավելի է մեծանում և օրինաչափորեն զարգանում ՍՄԿԿ ղեկավար դերը։